

Կ Ա Ր Ծ Ի Ը

Գնել Գարեգինի Խաչատրյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Հանրային նշանակալի կազմակերպությունների աուդիտի հիմնահարցերը ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հաշվի առնելով աուդիտի պետական վերահսկողության իրականացման բարձր արժեքայինությունը, շատ երկրներում աուդիտի վերահսկողության իրականացման համակարգը վերջին տարիներին ուշադրությունը կենտրոնացրել է հանրային նշանակալի կազմակերպությունների ուղղությամբ:

Public-Interest Entities (PIEs) հասկացությունը մինչ այժմ ՀՀ իրավական համակարգում չի սահմանվել կամ թարգմանվել: PIEs հասկացությունն առաջին անգամ սահմանվել է 2006թ. Եվրամիության աուդիտի դիրեկտիվում, որպեսզի հստակեցվի այն կազմակերպությունների ցանկը, որոնց հանրային կարևորությունից ելնելով՝ ֆինանսական հաշվետվությունները պետք է ենթարկվեն պարտադիր աուդիտի: Այդ կազմակերպությունները սահմանվել են՝ արժեթղթերի շուկայում ցուցակված կազմակերպություններ, ֆինանսավարկային և ապահովագրական կազմակերպություններ, անդամ-պետության կողմից հանրային շահից ելնելով PIEs դասակարգված այլ կազմակերպություններ՝ կախված նրանց գործունեության բնույթից, ծավալից կամ աշխատակիցների քանակից: Հետագայում ԵՄ-ը էլ ավելի է կարևորում PIEs-ի հանրային նշանակալի լինելը և ԵՄ-ում աուդիտի որակի բարեփոխման հիմնական շեշտադրումը կատարում է հենց PIEs-ի աուդիտի մասով՝ 2014թ. ընդունելով PIEs-ի աուդիտի խստացված առանձնահատուկ պահանջներ:

ՀՆԿ-ների աուդիտը առանձնահատուկ կարևորություն է ստացել աուդիտի ոլորտին վերաբերող արդի միջազգային գիտական, իրավական ու գործնական զարգացումներում, հաշվի առնելով աուդիտի որակի արդյունավետ վերահսկողության համար պահանջվող ֆինանսական և մասնագիտական ռեսուրսների սղությունը, ինչպես նաև կազմակերպությունների համեմատական կարևորությունը տնտեսության և լայն հանրության համար:

ՀՀ-ում ՀՆԿ-ների աուդիտի առանձնահատկությունները հետազոտվել են հիմք ընդունելով աուդիտի որակի ապահովման հիմնախնդիրները բուրկազմակերպությունների մակարդակով: Մասնավորապես, հետազոտվել են աուդիտի դերը տնտեսական համակարգի արդյունավետության բարձրացման գործում, աուդիտի որակի ապահովման և կարգավորման խնդիրները:

Հետազոտությունները փաստում են, որ չնայած ՀՀ-ում աուդիտի որակի արտաքին վերահսկողության լիազորություններով օժտված կառույցի՝ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ձեռնարկվել են տարբեր կարգավորումներ և միջոցառումներ, ներառյալ աուդիտի վերահսկողության առանձին տեսչության ստեղծում, սակայն դեռևս անհրաժեշտ է նշանակալի բարելավումներ՝ ՀՀ-ում աուդիտի որակի վերահսկման արդյունավետ համակարգի ներդրման նպատակով:

Նշված կարևոր հիմնախնդիրների գիտական հետազոտմանն ու լուծումների մշակմանն ու առաջադրմանն է ուղղված Գնել Խաչատրյանի կողմից ընտրված թեմայի հիման վրա ՀՀ-ում ՀՆԿ-ների գծով համապարփակ գիտական ուսումնասիրությունը, որն էլ կարևոր և արդիական է նրանց նկատմամբ աուդիտի որակի ապահովման արդյունավետ համակարգի մշակման և ներդրման նպատակով, ինչը ընդգծում է թեմայի արդիականությունը և հետազոտության արդյունքների կիրառման կարևորությունը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Հեղինակը հետազոտության հիմնական նպատակ է ներկայացրել ՀՀ-ում ՀՆԿ-ների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ որակյալ աուդիտորական եզրակացության հրապարակումը ապահովող համակարգի ներդրման հայեցակարգային և մեթոդական հիմնական դրույթների մշակումը:

Նպատակից բխող, ատենախոսությունում առաջադրվել, հետազոտվել և լուծվել են միմյանց հետ փոխկապակցված հետևյալ խնդիրները.

- ✓ Գիտահետազոտական եզրահանգումների հիման վրա մշակվել է ՀՀ-ում ՀՆԿ-ների աուդիտի որակի ապահովման ուղղված ինստիտուցիոնալ և իրավական նոր գործիքակազմ:
- ✓ Հետազոտվել է ՀՀ-ում աուդիտի որակի ապահովման առկա վերահսկողական համակարգերի արդյունավետությունը, մասնավորապես՝ ԱՄՍ-ներում կատարված արդի նշանակալի զարգացումների կիրառումը ՀՀ-ում:

- ✓ Հետազոտվել է «աուդիտի որակ» հասկացության գիտահետազոտական հայտանիշները, որպես աուդիտի որակի ապահովման համակարգի ուղենիշներ:
- ✓ Ուսումնասիրվել է ՀՆԿ-ների աուդիտի որակի ապահովման հիմնական բաղադրիչները, այդ նպատակներով հետազոտվել է միջազգային գիտական միտքը, իրավական կարգավորումները և մասնագիտական գործելաոճը:
- ✓ Ուսումնասիրվել է ՀՆԿ-ների տնտեսական չափորոշիչների միջազգային փորձը, այդ թվում տվյալ ոլորտին վերաբերող գիտահետազոտական հրապարակումները, հատկապես ուշադրություն դարձնելով ԵՄ և ԵԱՏՄ փորձին:
- ✓ Մշակվել է ՀՀ-ում ՀՆԿ-ների դասակարգման արդի մոտեցում՝ հիմնվելով ՀՀ տնտեսական չափորոշիչների, միջազգային փորձի և կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների վրա:
- ✓ Կատարելագործվել է պարտադիր արտաքին աուդիտի անհրաժեշտությունը բավարարող չափորոշիչները՝ ՀՀ տնտեսական զարգացման միտումների համահունչ:
- ✓ Հետազոտվել է ՀՀ-ում տարբեր օրենքներով և իրավական ակտերով սահմանված պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակը:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտ են հանդիսացել մշակված տնտեսական չափորոշիչների հիման վրա ՀՀ-ում դասակարգվող ՀՆԿ-երը:

Հետազոտության առարկան ՀՆԿ-ների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ որակյալ աուդիտորական եզրակացությունների հրապարակումն ապահովող համակարգի մշակման խնդիրներն են:

Ատենախոսության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը

Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել ֆինանսական հաշվետվողականության, հաշվապահության և աուդիտի վերաբերյալ դասական աշխատությունները, հաշվապահական հաշվառման, աուդիտորական գործունեության և աուդիտի վերաբերյալ կարգավորումներ պարունակող ՀՀ-ի օրենսդրական դաշտը և նորմատիվային-իրավական այլ ակտերը, ինչպես նաև ՀՆԿ-ների վերաբերյալ ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի փորձը:

Ատենախոսությունում լայնորեն ուսումնասիրվել և կիրառվել են ատենախոսության առարկային վերաբերող ՀՀ և արտասահմանյան գիտնականների և մասնագետների գիտական ու կիրառական աշխատություններն ու հրապարակումները:

Կարևոր տեղեկատվության աղբյուր է հանդիսացել ՀՀ-ում և արտերկրում միջազգային ցանցի անդամ աուդիտորական կազմակերպություններում և տեղական աուդիտորական կազմակերպությունում հեղինակի ղեկավարման տասնհինգ տարվա փորձառությունը:

Ատենախոսության տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ ազգային-վիճակագրական ծառայության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ հարկային պետական ծառայության, ՀՀ պետական ռեգիստրի, ՀՀ արժեթղթերի բորսայի, ինչպես նաև մասնագիտական և տեղեկատվական այլ աղբյուրների կողմից հրապարակված տվյալները ու հավաքագրված այլ տեղեկատվական նյութերը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը

Ատենախոսության կիրառական հիմնական արդյունքներից է ՀՀ-ում ՀՆԿ-ների աուդիտի որակի ապահովման արդի համակարգի մշակումը, ներառող՝ իրավական կարգավորումներ, ինստիտուցիոնալ գործիքակազմ և այլ միջոցառումներ:

Հիմնավորվել է ՀՆԿ-ների պարտադիր աուդիտի պահանջի ներդրման անհրաժեշտությունը՝ ՀՀ տնտեսության մեջ նրանց կշռի և հանրային կարևորության վերլուծության միջոցով: Պարտադիր աուդիտի անհրաժեշտությունը բավարարող կատարելագործված չափորոշիչների միջոցով գնահատվել է ՀՆԿ-ը չհանդիսացող, սակայն ՀՀ-ում այժմ պարտադիր աուդիտի ենթակա հարյուրավոր կազմակերպությունների նկատմամբ աուդիտի պարտադիր նորմը, որի արդյունքները ցույց են տալիս հարյուրավոր կազմակերպությունների նկատմամբ այդ պահանջի հարցական լինելը:

Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել ՀՆԿ-ների հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում իրականացվող գիտական հետազոտություններում, իրավական կարգավորումների մշակումներում և համապատասխան մասնագիտական համակարգային փոփոխությունների հայեցակարգերի մշակման և ներդրման փուլերում:

Ատենախոսության գիտական նորույթն ու հիմնական արդյունքները

Ատենախոսության հետազոտության ընթացքում ստացված հիմնական գիտական նորույթները հետևյալն են.

1. ՀՆԿ-ների աուդիտի որակի բարելավման նպատակով մշակվել է ՀՀ-ում ՀՆԿ-ների աուդիտի որակը ապահովող ինստիտուցիոնալ ու իրավական նոր գործիքակազմ:
2. ՀՀ տնտեսության ժամանակակից մարտահրավերներին արդյունավետ արձագանքող ՀՆԿ-ների շրջանակի ապահովման նպատակով տնտեսական չափորոշիչների հիման վրա մշակվել է ՀՆԿ-ների դասակարգման արդի մոտեցում:
3. ՀՀ տնտեսական զարգացման միտումներին համահունչ կատարելագործվել են պարտադիր աուդիտի անհրաժեշտությունը բավարարող չափորոշիչները:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը շարադրված է 166 էջ ծավալով, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «ՀՆԿ-երի արտաքին աուդիտի տեսամեթոդական հիմքերը» գլխում ուսումնասիրելով ՀՆԿ-երի տնտեսական չափորոշիչների մեթոդաբանությունը, ՀՆԿ-երի ֆինանսական հաշվետվողականության և աուդիտի առանձնահատկությունները, ՀՆԿ-երի աուդիտի միջազգային զարգացումները, ատենախոսը փորձել է հանգել ՀՆԿ-երի տնտեսական գործընթացի բարելավման ուղիներին ՀՀ-ում: Կատարված ուսումնասիրության և միջազգային փորձի կիրառման արդյունքում հեղինակը վերլուծել է ՀՆԿ-երի դասակարգման կարևորությունը տնտեսության մեջ և մշակել ՀՆԿ-երի տնտեսական չափորոշիչներ: Ներկայացրել է ՀՀ-ում ՀՆԿ-երի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և աուդիտի իրականացման առկա արդի կարգավորումները՝ դրանք համադրելով ԵՄ-ում ՀՆԿ-երի

վերաբերյալ առկա կարգավորումների հետ: Համապատասխան ուսումնասիրությունների հիման վրա հեղինակը կարևորել է այն հանգամանքը, որ աուդիտորի և աուդիտի ղեկավարի ռոտացիայի, ՀՆԿ-երի որակի ապահովմանը միտված այլ կարևոր գործիքների մասով ՀՀ-ում բարելավման անհրաժեշտություն կա:

Ատենախոսության երկրորդ՝ «Արտաքին աուդիտի արդի խնդիրները ՀՀ-ում» գլխում ուսումնասիրվել է ՀՀ-ում այժմ պարտադիր արտաքին աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակը, հեղինակի կողմից ներկայացվել է այն չափորոշիչների կատարելագործված տարբերակը, որոնց կիրառումը թույլ է տալիս գնահատել պարտադիր աուդիտի անհրաժեշտությունը տվյալ խմբի կազմակերպությունների նկատմամբ:

Ներկայացվել է ԱՄՍ-երում աուդիտորական եզրակացության արդի փոփոխության կարևորությունը և վերլուծվել, թե նոր եզրակացության կիրառումը ՀՀ-ում 2017-2018թթ. ընթացքում ինչպիսի արդյունքներ է արձանագրել:

Հեղինակի կողմից հանգամանալից հետազոտվել և պարզաբանվել է նաև ԱՄՍ-երի հայերեն թարգմանության և անգլերեն հրապարակված տարբերակերի միջև ժամկետային տարբերության խնդիրը:

Կարևորել է ԱՄՍ 701-ին, «Անկախ աուդիտորի եզրակացությունում առանցքային աուդիտորական հարցերի ներկայացում», հետևելուն պարտադիր պահանջը և փաստել է, որ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում ՀՆԿ-երի նկատմամբ ԱՄՍ 701-ի կիրառման իրավական պահանջի սահմանման անհրաժեշտությունը:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՆԿ-երի արտաքին աուդիտի որակի ապահովման համակարգի զարգացման ուղիները ՀՀ-ում» գլխում վերլուծվել են աուդիտորական գործունեության կարգավորման բարելավման ուղիները: Պարզաբանվել է՝ արդյո՞ք ՀՆԿ-երի աուդիտի որակի ապահովման նպատակով վերահսկողությունը պետք է իրականացվի մասնագիտական կառույցների, թե ՀՎԽ-երի միջոցով: Մշակվել և հիմնավորվել է ՀՆԿ-երի աուդիտի որակի ապահովման համակարգը: Ներկայացվել է ՀՆԿ-երի աուդիտի որակի բարելավման համար կարևոր այլ միջոցառումներ, մասնավորապես՝ աուդիտորների կողմից ոլորտային գիտելիքների զարգացման խթանումը, ՀՆԿ-երի աուդիտորների իրավական պատասխանատվության բարձրացումը, հաշվապահական և աուդիտի կրթական ու որակավորման համակարգի

զարգացումը, մասնագիտական կառույցի արդյունավետ գործունեությունը: Ուսումնասիրել է ՀՆԿ-երի աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպությունների կարճ-ցանկերի դե ֆակտո և դե յուրե կիրառման միջազգային և ՀՀ փորձը, կարճ-ցանկերի կիրառման առավելությունները ու խնդիրները, որոնք ցույց են տալիս, որ ՀՆԿ-երի աուդիտը հիմնականում իրականացվում է միջազգային խոշորագույն քառյակի կողմից, իսկ փոքր մասը՝ միջազգային աուդիտորական խոշոր տասնյակում գտնվող աուդիտորական կազմակերպությունների ցանցերի կողմից:

«Եզրակացություն» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության վերաբերյալ հիմնական եզրակացությունները:

Դիտողություններ առենախոսության վերաբերյալ

Առենախոսությունը գերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Էջ 23-ում աղյուսակ 1.1.9-ը վերնագրված է «խոշոր հարկատուների հարկ/քանակ համադրումը 2019թ.-ի դրությամբ», սակայն բուն բովանդակության մեջ վերլուծությունն իրականացվել է ՀՀ-ում գործող հարկատու բոլոր կազմակերպությունների ենթախմբերի գծով: Կարծում ենք աղյուսակի վերնագրում պետք է նշվեր « ՀՀ-ում գործող հարկատու կազմակերպությունների հարկ/քանակ համադրումը 2019թ.-ի դրությամբ»:
2. Էջ 31-ում 1.1 «ՀՆԿ-երի տնտեսական չափորոշիչների մեթոդաբանությունը» ենթահարցն ամփոփելով հեղինակը նշել է, որ ՀՆԿ-երի դասակարգման կարևորությունը տնտեսության համար ընդգծելու նպատակով հետազոտվել է միջազգային լավագույն փորձը, սակայն նշված ենթահացում նմանօրինակ հետազոտություն, ըստ մեզ, չի իրականացվել: Միայն ներկայացվել է ՀՀ-ում գործող խոշոր, միջին հարկատուների գծով տնտեսական չափորոշիչների հետազոտություն՝ 2016թ.-ի կտրվածքով: Նշված միջազգային փորձը կիրառվել է 1.2 «ՀՆԿ-երի ֆինանսական հաշվետվողականության և աուդիտի առանձնահատկությունները» ենթահարցում:
3. Էջ 34-ում ներկայացված աղյուսակ 1.2.1-ը, «Բաժնային կապիտալացմամբ ըստ խոշորության դասակարգված կազմակերպությունների կողմից ֆինանսական հաշվետվություններում

սխալների քանակը ԱՄՆ-ում 2009թ.-ի ընթացքում», թվական հետազոտության թարմացման կարիք ունի:

4. Էջ 43-ի երկրորդ պարբերությունում. «Պահանջվում է, որ ցուցակված կազմակերպության աուդիտորը կարող է լինել թողարկող կազմակերպությունների աուդիտի բավարար փորձ և մասնագիտական հմտություններ ունեցող անկախ և վստահելի աուդիտորական կազմակերպություն» պարբերությունը հեղինակի կողմից ներկայացվել է որպես վերափոխված միտք, թե՞ հղում է կատարել ՀՀ ԿԲ-ի կողմից գրանցված «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոններ»-ից: Նշված հղման մեջ այդպիսի պարբերություն չկա:
5. Էջ 63-ում ներկայացված աղյուսակ 2.1.3-ում, «Պարտադիր աուդիտի անհրաժեշտությունը բավարարող չափորոշիչների կիրառումը», հեղինակի կողմից ներկայացվել են ՀՀ-ում գործող իրավական կարգավիճակ ունեցող պարտադիր արտաքին աուդիտի պահանջ ունեցող ոլորտները և առանձին սյունով առանձնացվել վերջիններիս ՀՆԿ դասակարգելու պայմանը, սակայն որոշ տողերում այդ գծով հիմնավորում չի նշվել: Հարկավոր է պարզաբանում տվյալ հատվածների հետ կապված: Օրինակ, եթե նշված հատվածների հետ կապված օրենքի տեսանկյունից կան անորոշություններ, ապա նշել «անորոշ կարգավիճակ» արտահայտությունը:
6. Էջ 95-ում հեղինակը առաջարկում է ՀՆԿ-եր աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպության արտաքին որակի վերահսկողության անցկացման համար փորձագետի օբյեկտիվության սկզբունքը պահպանելու նպատակով կիրառել աուդիտորների կարճ-ցանկ, որոնք կլինեն օտարերկրյա փորձագետներ: Կարծում ենք օբյեկտիվության սկզբունքը կպահպանվի նաև, եթե տվյալ փորձագետները լինեն ՀՀ-ից, ուղղակի խստիվ ստուգվի վերջիններիս անկախությունը, և ժամկետային պայմանագրում յուրաքանչյուր օրվա համար բարձր վարձրատրության դեպքում հնարավոր կլինի նաև լուծել օբյեկտիվության չպահպանման ռիսկի խնդիրը:
7. Էջ 103-ում հեղինակը նշել է, որ խարդախության ռիսկին պատշաճ արձագանքելու նպատակով աուդիտորական միջազգային խոշոր ընկերությունները ստեղծել են մի գործառույթ, որը դարձել է առանձին

մասնագիտացում՝ կոչվում է դատափորձագիտական աուդիտ (forensic audit): Նշենք, որ մեր հանրապետությունում գործում է ՀՀ ՉԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական կառույցը, որտեղ գործող մի շարք փորձագիտական ստորաբաժանումներից մեկն էլ հանդիսանում է «Տնտեսագիտական և հաշվապահական փորձաքննությունների» բաժինը: Կարելի էր գիտական նորույթի տեսքով առաջարկ կատարել տվյալ բաժնում ներառել նաև «Փորձագիտական աուդիտ» ուղղվածությունը, որի հիմնական նպատակը կլիներ ԱՄՍ 240 «Աուդիտորի պատասխանատվությունը՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում խարդախությունների դեպքերի առնչությամբ»-ի և ԱՄՍ 550 «Կապակցված կողմեր»-ի պահանջների չպահպանման հնարավոր դեպքերի փորձագիտական քննումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողություններով, ինչպես նաև ատենախոսության դրական արժանիքներով, կատարման պատշաճ գիտական մակարդակով հանդերձ՝ Գնել Խաչատրյանի «Հանրային նշանակալի կազմակերպությունների աուդիտի հիմնահարցերը ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել, որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ մշակված են ՀՆԿ-ների աուդիտի որակի բարելավման նպատակով ՀՀ-ում ՀՆԿ-ների աուդիտի որակը ապահովող ինստիտուցիոնալ ու իրավական նոր գործիքակազմ, ՀՆԿ-ների դասակարգման արդի մոտեցումներ: ՀՀ տնտեսական զարգացման միտումներին համահունչ կատարելագործվել են պարտադիր աուդիտի անհրաժեշտությունը բավարարող չափորոշիչները: Վերոնշյալները պարունակում են գիտական նորույթ:

Հետազոտության արդյունքները քննարկված են Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսահաշվապահային» ամբիոնի նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակած թվով 6 (վեց) գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատարակման պահին ընդունելի հանդեսներում ու ժողովածուում:

Ներկայացված սեղնագիրը կազմված է հիմք ընդունելով ԲՈԿ-ի պահանջներն ու հիմնականում համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Գնել Գարեգինի Խաչատրյանի «Հանրային նշանակալի կազմակերպությունների աուդիտի հիմնահարցերը ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
27 մայիսի 2021թ.

Ա. Ա. Բայադյան

Ա.Ա. Բայադյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ՀՊՏՀ-ի գիտական քարտուղար
27 մայիսի 2021թ.

Ն. Հ. Դարբինյան

